ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՕՃՈՒՆ

«Ուխտս դիք եւ կատարեցէք»

Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության շրջանակում կարևորագույն դեր ունեն ուխտագնացությունները: Ուխտագնացությունը յուրաքանչյուր քրիստոնյայի հարգանքի ու խոնարհության մատուցումն է պատմական այն դեմքերի նկատմամբ, ովքեր իրենց ապրած ու գործած ժամանակահատվածում «զբարւոք պատերազմն պատերազմեցին»: Հայ Եկեղեցու պատմության մեջ այսպիսի դեմքերից է Ս. Հովհան Օձնեցին՝ Ը դարի մեր նշանավոր Հայրապետը, ով հայ ժողովրդի կյանքում բացառիկ դեր է ունեցել արաբա-բյուզանդական հակամարտությունների շրջանում:

Երանաշնորհ Հայրապետի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու և նրանով նորոգվելու համար էր, որ ապրիլի 17-ին բազմաթիվ ուխտավորներ էին հավաքվել Գուգարաց թեմում:

Թեմի բարեջան առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի և Լոռիի մարզպետարանի նախաձեռնությամբ դեպի Օձուն կազմակերպված ուխտագնացությանը մասնակցելու էին եկել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականներ. Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոգոսյանը, Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Տ. Եփրեմ արքեպս. Թապագյանը (Լիբանան), Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը :

Պատարագ Օձունի Ս. Հովհաննես եկեղեցում

Վաղ առավոտյան ուխտավորների բազմությունը Վանաձորի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցուց շարժվեց դեպի Օձուն: Այս նշանավոր գյուղը, ուր ծնվել էր իմաստասեր Հայրապետը, գտնվում էր աշխույժ եռուզեռի մեջ: Օձունցիները շտապով գնում էին դեպի եկեղեցի, որը, շուրջ 1600-ամյա մի կառույց, սքանչելի մի ներդաշնակություն էր ստեղծում վանքի շրջափակի կանաչազարդ տարածքի հետ և իր գմբեթավոր սլացքով կարծես մխրճվում էր երկնքի մեջ:

Նախքան Ս. Պատարագի սկսվելը, կատարվեց գյուղի կենտրոնում կառուցված Ս. Հովհան Օձնեցու արձանի բացումը: Ժամը 11:30-ին սկսվեց Ս. Պատարագը: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա

Խաչատրյանը: Ս. Պատարագին ներկա էին թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Շահե արքեպս. Աճեմյանը, Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Տ. Եփրեմ արքեպս. Թապագյանը, Լոռու մարզպետ Հ. Քոչինյանը, Օձունի գյուղապետը, հոգևոր ու աշխարհիկ այլ այրեր, հավատացյալ ժողովրդի հոծ բազմություն: Պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, խորանից, ներկաներին դիմեց Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը: Սրբազան Հայրը քարոզի մեջ կարևորեց ուխտագնացությունների գաղափարը և ընդգծեց Ս. Հովհան Օձնեցի իմաստասեր Հայրապետի ապրած աստվածահաճո կյանքն ու հոգևոր բարեմասնությունները:

Դեպի Արդվի

Ս. Պատարագի մատուցումից հետո ուխտավորների բազմությունը շարժվեց դեպի Արդվի, ուր ամփոփված է Հովհաննես Օձնեցու աճյունը: Եպիսկոպոսաց դասի և հոգևոր Հայրերի առաջնորդությամբ՝ ուխտավորները բարձրացան Արդվիի բարձրադիր վայրերից մեկում գտնվող Ս. Հովհաննես եկեղեցին՝ շրթներին «Ուրախ լեր» շարականը: Այն մատուռում, ուր ամփոփված էր Հայրապետի աճյունը, կատարվեց ուխտավորների տաճար մուտք գործելու արարողություն: Երգվեց «Հայրապետ սուրբ և ամբիծ» շարականը, քաղվեցին սաղմոսներ և ընթերցվեցին «Առ դրանն սրբոյ եկեղեցւոյ» ու «Որ ընտրեցեր» աղոթքները:

Վերջում ներկաներին, որոնց թվում էին Եփրեմ, Պարգև, Սեպուհ, Նավասարդ Սրբազանները, իր պատգամն ու խորհրդածությունները փոխանցեց Տ. Մոսրոպ արքեպս. Աշճյանը: Սրբազան Հայրը հատկապես շեշտեց սրբահռչակ Հայրապետի իրական՝ կյանքում ապրած աստվածպաշտությունը և, հայացքը հառած Օձնեցու տապանաքարին, նշեց, «Ս. Հովհան Օձնեցու դամբարանը, որ անշուք ու պաղ է իր արտաքին երևույթի մեջ, շքեղազարդներից ու հոգևոր ջերմացուցիչներից է իր հոգևոր խորհրդով»:

Արարողության ավարտին ուխտավորները կրկին մեկնեցին Օձուն, որտեղ մասնակցեցին սիրո ճաշի: